



**«ԱՐՑԱՍԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«20» օգոստոս 2010 թ.

N 1-2010/10

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՑԱՍԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ
ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհուրդը
ո թ ո շ ու մ է՝

1. Լրացուցիչ տեղաբաշխել 1.400.000.000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ, 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսեր:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում ապահովել բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքի կիրառումը՝ հավելվածով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Հանձնարարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենին ապահովել բաժնետոմսերի տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի («Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության) հետ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, բաժնետոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի օգոստոսի 20-ից:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան